

ՅՈՎՀԱՆՆԵՍ ԱՍԼԱՆԵԱՆ

ԿԵԱՆՔԻ ՄԷՋ

Վ Է Պ Ի Կ

(Պատկերներ իրական կեանքից)

«Անյայտացած վշտի համար ողբա-
լը, նոր վիշտ առաջացնելու ամե-
նաուղիղ հանապարհն է»:

ՋԵՔՍՊԻՐ

800

891. 99

Ա-73

Թ Ի Յ Լ Ի Ս

Տպարան «ԷԿՈՆՕՄԻԱ» Ա. Վ. (Բոսիսկոյ Բակովեան)
1912

891.542-3 1001
 2-74 937
 464881 566

9/1527 401 911

891-993
 2-73

ՎԵՐԱԾԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ
 անդրանիկ անդ
 304 ՀԱՆՏԻՄ ՄԱՍԿԵՆԱՆ
 18 ՆՈՎԵՄ. 1918 Ք. ԵՐԵՎԱՆ

2011-05

այ.

== ԿԵԱՆՔԻ ՄԷՋ ==

ՎԵՊԻԿ

(Պատկերներ իրական կեանքից)


1001
 937

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ
 *С.С.Р.-А Публичная Библиотека
 7/11 1922
 ЕВЕРНА, МЯСНИКОВ
 П. ԱՅՄԱՆԻ ԶԱՆԻ ԱՆԿԱՆ

«Անյայտացած վշտի համար ողբա-
 լի, նոր վիշտ առաջացնելու ամե-
 նաուղիղ ճանապարհն է»:
 ՀԷՔՄՊԻՐ

Թ Ի Յ Լ Ի Ս

Տպարան «ԷԿՈՆՕՄԻԱ» Ա. Մահեստի Յակովբեան.
 1912



111-012

ԿԵԱՆՔԻ ՄԷՋ

Գարնանային ուշ գիշեր էր: Ղ. գիւղի փողոցներում խոր լռութիւն էր տիրում. մայիսեան զով քամին պատուհաններից ներս էր ընկնում և բնութիւնը նոր շունչ պարգևում նրանց, որոնք օրւայ ծանր աշխատանքից յետոյ հանգիստ էին գտել իրենց տներում:

Գիշերւայ այգւութեան մէջ, փողոցում մի օտարօտի ստուեր է երերւում, որ յոգնած, ուժասպառ, թոյլ ոտները քաշ տալով, մերթ կանգ առնելով, մերթ շուրջը նայելով՝ հագիւ էր կարողանում առաջ անցնել. նրան թւում էր, թէ ոտքը կոխած տեղը գետինը վառւում է. բայց նրա փոյթը չէր, նա շարունակում էր քայլել...

Որպէս կեանքի խնճոյքից անարգլած, գնում էր նա առաջ, մշմշում՝ ինչպէս մի գաղտագողի-ոճրագործ և գիշերւայ մթութիւնից օգուտելով՝ ուզում էր փախչել, հեռանալ մարդկանցից:

Խորհրդաւոր լուսթեան մէջ պարզ լսելի էր նրա դուրդոշուն ձայնը, որ գանգատուում էր բաղդից և անիծում իր ծնած օրը:

Խեղճ մարդ, ասացի ես անհուն մտքերի մէջ խորասուզելով, տեսնես ո՞ր սատանի քամին է դրդել քեզ այս տխուր ժամին փողոցները շրջել, բայց... դուցէ հեռաւոր արևելքում ունի սիրեցեալներ ու գնում է նրանցից իր կարօտն առնելու...

Եւ ահա ամպերը ցրւելով, լուսնի շողերը երևացին. կապոյտ երկնքում բիւրաւոր աստղերն սկսեցին փայլել, որոնք էլ լուսաւորեցին մենաւորի ուղին...

ՄՈՒՇԵՂԻ ՎԵՐԱԴԱՐՁԸ

Հիւսիսից փչող մեղմ գեփիւռի հետ՝ հազիւ լսելի մի ձայն հասաւ ականջիս: Լսածս խօսքերից գուշակեցի, թէ մենակ է նա այս աշխարհում և ո՞րտեղից կարող էր գտնել իրան պէս թշուառներ, որ կարողանար նրանց հետ միասին տանջւել: Ու թշուառ թողնելով քաղաքի դատարկ ու հեշտասէր կեանքը, ցնորւածի պէս զանազան հարցեր տալով ինքն իրան՝ մօտենում է վերոյիշեալ մենաւոր մարդուն:

էհ, մտածեցի ես. երևի խելագարին մէկն է...

Լուսնի ազդեցութեան տակ պարզ երևում էր եկողի կիսամերկ մարմինը, որը կօշիկների ճեղքւածքներից՝ դուրս էին պրծել վտիտ մատները, և որոնք կարծես բողբոջում էին իրենց անվերջ տանջողի դէմ:

Նրա դէմքի գծագրութիւնը, լայն ճակատը, երկար միըռքը և արեգակի պէս փայլուն զոյգ աչքերը՝ յիշեցնում էին ինձ սրանից մօտ 10 տարի առաջ աքսորւող Մուշեղի պատկերը: Եւ ճիշտ որ, տասը տարւայ տաժանակիր աշխատանքից յետոյ դժբաղդ աքսորականը վերադարձել էր տուն, իր սիրելի կնոջ և չափահաս դարձած Հեղինէից կարօտն առնելու, բայց իզո՞ւր, արգէն ուշ էր...

Մուշեղի կինն իր սիրելի ամուսնու հեռանալուց յետոյ, շուտով զրկւել էր իր սեփական տնից. նա ծախել էր ունեցած-չունեցածը, քանի որ ապրուստի միջոց էր հարկաւոր. և ինչ՞ կարող էր անել այնուհետև մի խեղճ ու անփորձ կին...

Երկար ժամանակ թափառելով նա՝ շատ բարեգործ մարդկանց դուռ էր բաղխել, շատ ծանօթների դիմել, որ ապրուստի միջոց տան իրան, որ քաղցից չը մեռնի. բայց իզո՞ւր. մարդ-

կանց սիրտը քար էր ու քար, նրանք կարծես չէին էլ լսում նրա աղիողորմ ձայնը:

Ու Ազնիւը երկար սպասեց, մինչև որ կեանքի բաժակը լցւեց դառն թոյնով, շուտով հեռացաւ նա անգութ մարդկանցից և իր միակ չեղինէի հետ գնաց յաւիտենականութեան գիր-կը հանգստանալու...

Ազնիւը յանձնւեց հողին. հողաթմբի վրայ մի սև քար դրւեց, և այդ քարի վրայ էլ դրւեց. «Այստեղ է հանգչում Մուշեղի ընտանիքը»:

.....

Մուշեղի վերադարձից անցել էր միայն երկու օր: Նա գրկւած տուն ու տեղից. գիշեր ու ցորեկ անհանգիստ շրջում էր փողոցներում. նա ձեռքն ընկած կոպէկները շտապում էր հասցնել գինեատուն, որպէսզի հանգստացնի իր վիրաւոր հոգին ու մոռացութեան տալ բոլորը, բոլորը... բայց իզուր: Նա մի երկու բաժակ օղի պարպելուց յետոյ, գինեանից դուրս էր պրծնում և գոռում որպէս մի վիրաւոր առիւծ ու այդ դրութեան մէջ շրջում շարունակ:

Եւ երկար, երկար տանջւելուց յետոյ, նա երեսը դաբձնում էր դէպի՝ երկինք և ուշի ուշով դիտում, թէ ինչպէս բիւրաւոր աստղերը հանգիստ

կերպով փայլում են երկնքում և թէ՛ ինչպէս լուսինը իր ազօտ լոյսով անցնում էր առաջ և լուսաւորում աշխարհի մութ անկիւնները: Ու այս դրութեան մէջ՝ հետեւելով նա լուսնին՝ անցնում էր նրա լուսաւորած փողոցներով, մտածելով, թէ գուցէ պատահի մի այնպիսի մարդ, որ լուսնի պէս քաղցր ու բարի լինի և հասկանայ իրան ու դառն ըոպէներում կարեկից լինի իր ցաւերին:

Այսպիսի մտաորումներով՝ գնում է նա դէպի մենաւորը: Մնում էր միայն մի քանի քայլ, որ նրանք երկուսը միասին լինէին...

ՀԱՆԴԻՊՈՒՄՆ

Խեղճ, տարակուսած մենաւորը տեսնելով դէպ իրեն եկող անկոչ հիւրը՝ ցնցւեց, դժկամակութեամբ կանգ առաւ և լուրջ հայեացք դարձնելով դէպի նա, սպասեց, թէ ինչ էր ասելու նորեկը. լուռ էր նա գիշերային պատահական անցորդի առաջ:

Սիրուն լուսնի պայծառ շողքը ընկել էր նրանց երեսին և լուսաւորում էր նրանց զոյգ աչքերը, որոնք կայծերի պէս ուղում էին դուրս պրծել և կրակ թափել այս նեղ աշխարհի գլխին,

ուր մարդիկ ծանր աշխատանքով, արիւն-քրքր-
տինք թափելով անբաւական էին իրենց կեանքից,
գազանների պէս միմեանց արիւնն էին ծծում,
որպէսզի տեղ բացւի այս դարդոտ աշխարհում և
մարդիկ հանգիստ ապրեն. ահա թէ ի՞նչ էր թե-
լադրում նրանց սրտերը...

Մուշեղը մօտեցաւ ու մենաւորին հարցրեց.

— Բարեւ, եղբայր, ո՞ւր այդպէս մենակ.

Մենաւորին առաջին անգամն էր պատա-
հում մի այնպիսի մարդ, որ իրեն սրտագին «եղ-
բայր» էր անւանում. պատասխանեց նա.

— Ազատութիւն գտնելու...

— Ի՞նչ էք ասում, բարեկամ, մի՞թէ կա-
րելի է այս զարհուրելի աշխարհում ազատութիւն
գտնել:

— Յաւիտենական ազատութիւն եմ ասում,
հասկանո՞ւմ էք...

Եւ նրա զոյգ աչքերից արցունքի խոշոր կա-
թիլներ գլորւեցին ու սառեցին շրթներին...

Այս բոլորը անհասկանալի մնաց Մուշեղի
համար, և նա ձեռքը դնելով նրա ուսին՝ շարու-
նակեց.

— Եղբայր, դուք բոլորովին նման էք այն
մարդկանց, որոնց մասին ես երազել էի շա՛տ
ու շա՛տ անգամ, բայց աչքով չէի տեսել. այժմ

ահա երազս իրականացած եմ տեսնում. իմ առաջ
պատկերանում է այն մարդը, որը նոյնքան
տանջւած ու չարչարւած է, որքան ես. միայն
հիմա եմ ես հաւատում, որ աշխարհումս կան
շատ և շատ թշւառներ... Ու Մուշեղը լուրջ
հայեացք գցելով դէպի նա ասաց.

— Եղբայր, ձեր արտաքինը մեծ հետա-
քըրքրութիւն է պատճառում ինձ: Թոյլ տւէք
իմանալ ձեր ով լինելը:

— Ի՞նչ. — դուք ուզում էք իմանալ թէ ո՞վ
եմ ես. յուզւած պատասխանեց մենաւորը, բայց
չէ՞ որ մենք թշւառներս՝ երջանիկներիդ հետա-
քըրքրութիւն, դարձութիւն ենք միայն պատճա-
ռում. այնպէս չէ՞ և դուք հարցնում էք...

— Ես խղճահարւելով եմ հարցնում, թէ ո՞վ
էք դուք. ես ինքս էլ թշւառ եմ, չար մարդիկ
անբաղդացրին ինձ, կեանքը ինձ համար այլ ևս
գոյութիւն չունի, ես մ'ենալ եմ այս աշխարհում՝
զրկւած ամեն ինչից, ինձ մնում է միայն կոր-
չել, չբանալ այս անիծած աշխարհից և... ուրիշ
ոչինչ:

Նա սկսեց դառն կերպով հեկեկալ:

~~~~~

## ԵՐԿՈՒ ԸՆԿԵՐՆԵՐԸ ՄԻԱՍԻՆ

Մենաւորի սիրտը վաղուց էր պատել վիշտն ու ցաւը. Մուշեղն էլ հնչեցնում էր իր սրտի լարերը, յիշելով այն բոլոր երազներն ու պատկերները, որոնք պատահել էին իր կեանքումը։ Մենաւորը հանգստացնելով Մուշեղին ասաց.

— Ես հազիւ 15 տարեկան հասակում կը լինէի, երբ ծնողներս թողին ինձ մենակ, անտէր ու որբ և գնացին յաւիտեանս հանգստանալու այնտեղ, որտեղ կեանքը մարդկանց համար գոյութիւն չունի։ Ես բարեգործ մարդկանց շնորհիւ շարունակեցի դպրոց գնալ մինչև 17 տարեկան հասակս, իսկ այնուհետև վճռեցի թողնել դըպրոցը և իմ աշխատանքով ապրել, քանի որ հարուստների տւած կոպէկները թոյն էին խեղճերիս համար։ Ընկերներս միշտ ասում էին, թէ՛ «Սամէլը ուրիշների փողերով է ապրում», բայց վա՛յ էն ապրուստին, ինչ որ ես էի ապրում։

Մինչև որ Սամէլը կը վերջացէր իր խօսքերը, Մուշեղն ընկաւ նրա վզովը և սկսեց մանուկի պէս դառն կերպով հեկեկալ։

— Սամէլ, այդ դո՞ւ ես. բացական էր Մուշեղը. չեմ հաւատում իմ աչքերին, ա՛խ, որքա՞ն ես փոխել դու այս 15 տարւայ ընթացքում։ Ես բոլորովին չկարողացայ ճանաչել քեզ։

Սամէլի հոգին յուզեց, ալեկոծեց. նրա ուղեղն սկսեց խիստ արագ գործել, մտաւատելները իրար յաջորդեցին ու նա վերջապէս ճանաչեց իր ընկերոջը՝ միայն ձայնիցը. երկու ընկերները փաթաթւեցին միմեանց, քաղցր համբոյրների տարափն սկսեց ու մի քանի րոպէ խօսք չէին գտնում ասելու։

Անհանգստութիւնն ու յուզումները տիրել էր նրանց։ Վերջապէս Սամէլը խզելով լռութիւնը՝ ընկերոջն ասաց.

— Յիշո՞ւմ ես, սիրելիս, մեր մանկութեան այն օրերը, երբ դասերը վերջացնելուց յետոյ ուրախ, զւարթ, վազում էինք այգիները, անտառները, դաշտերը և ապա փունջ-փունջ ծաղիկները ձեռքներին՝ ուրախ, զւարթ տուն էինք վերադառնում։ Այն ժամանակ ատենողները երանի էին տալիս մեզ. ուրիշներն էին ուրախանում մեզանով, իսկ այժմս մեր խեղճութիւնով հաւասարւել ենք գետնի հետ. մենք մարդկանց առաջ մի ոչնչութիւն ենք. մարդիկ առանց խղճահարւելու կոխոտում, անցնում են մեր վրա։

ցով. նրանք թափում են մեզ վրայ թոյնի այն կաթիլները, որոնք փակում են մեր աչքերը, թաղում մեր բոլոր յոյսերն ու երազները և որոնց վրայ թևատարած սաւառնում է անագորոյն մահը...

— Այո', սիրելիս, կրկնեց Մուշեղը, անցան այն քաղցր ու երջանիկ օրերը երազների պէս: Մեր փայլուն արեգակը մայր մտաւ, այլ ևս չի ժպտայ նա մեր երեսին, բոլորը օտարացել են մեզ համար: Ո՛հ, անգո՛ւթ աշխարհ, մի՞թէ այս բոլորը մեզ համար են ստեղծւած. մի՞թէ մենք աշխարհի խորթ զաւակներն ենք...

Լուսնի վերջալոյսն էր տատանւում հեռաւոր հորիզոնի վրայ:

Ահա աքաղաղներն էլ կանչում են իրանց «ծողորո՛ւ ղո՛ւն»։ տնային եղջիւրաւոր անասունները իրանց բառաչիւնով բարձրանում են մօտակայ սարը, թռչունները իրանց ծլւոցով ներդաշնակութիւն են կազմել, ծաղիկների բուրմունքը լցրել է ողջ գիւղը անուշահոտութեամբ: Իսկ որ մի բանաստեղծական առաւօտ:

Դեռ հիւսիսից փչում էր զով քամին. հաւ և բանւոր գիւղացիները երեսները խաչակնքելով ջարան-շարան գնում են իրենց գործին: Միայն Սամէլն ու Մուշեղն էին, որ չէին մասնակ-

ցում այդ բանւոր դասին: Նրանք շարունակում էին անցնել առաջ, վերջապէս մօտեցան գիւղի ծայրի մօտ գտնւող աղբիւրին ու նստան քիչ հանգստանալու:

Գեղջկուհիները ցնցոտիներ հագած, բոբիկ ոտներով, կուժերն ուսերին, երգելով, ուրախ, զլարթ գալիս էին աղբիւրից ջուր տանելու, ապա քաղցր հայեացք ձգելով անցորդների վրայ՝ հեռանում էին:

Երկու ընկերները նայում էին այդ քնքոյշ արարածներին և զմայլւում. նրանք յիշում են իրենց մանկութեան օրերը, և չկարողանալով՝ երկար դիտել նրանց երկնային և ուրախ պատկերները՝ շարունակեցին առաջ, առաջ անցնել այն ճանապարհով, որը տանում էր ուղիղ գերեզմանատուն:

Մուշեղը դարձաւ ընկերոջը, խոր հառաչանք քաշելով՝ և ուզեց նրա անբաղդութեան պատճառն իմանալ, թէ ի՞նչպէս յաւիտեան փակեցին նրա բաղդի խաւար դռները, բո նա այլ ևս չի՝ ուզում կեանքի դէմ կռիւ մղել:

— Ասա, սիրելիս, ի՞նչն է քո դժբաղդութեան պատճառը, դու բոլորովին չե՞ս ուզում յիշել անցեալը:

— Է՛հ, սիրելի Մուշեղ. ասաց նա հազիւ

լսելի ձայնով. իմ անցեալը մի աննկարագրելի պատկեր է, դարձերի մի շարան, որ դժւարանում եմ յիշել, պատմել. օհ, ինչպէս մի փոթորկալից օր, երբ ես լողում էի կեանքի ծովի խոր անդունդներում, վրիթադէզ ալիքները դուրս շարտեցին ինձ կեանքի ծովից. ես վերջին հրաժեշտս տւի իմ սիրելի զաւակներին, օտարութեան ցուպը ձեռքս առայ և ահա զրկւած ամեն ինչից՝ այժմ անվերջ թափառում եմ...

Մուշեղը հասկացաւ ընկերոջ դժբաղդութեան պատճառը, բայց նորից հարցրեց.

— Իսկ կի՞նդ...

Կինո... նա դաւաճանեց ինձ, ուրիշին սիրեց. նա ապրում էր ինձ հետ միայն նրա համար, որ որդկերանց մայր էր դառել, իսկ սրտով ուրիշի հետ էր կապւած:

Սամէլը ամօթից գլուխը քաշ զցեց և չը կարողացաւ այլևս շարունակել:

Մուշեղը տեսնելով, որ ընկերոջ հոգեկան դուրթիւնը ձանր է ու յոգնած՝ գուրգուրալով մօտեցրեց նրան գերեզմանատան դրան առաջ դրած նստարանին, պառկեցրեց նրան ու իր հին վերմակով ծածկեց, որպէսզի փոքր ինչ հանգստանայ, իսկ ինքը մտաւ գերեզմանատուն:

Մուշեղը հարց ու փորձ անելով, կարողացաւ գտնել իր կնոջ շիրիմը, որտեղ գրւած էր՝ «Այստեղ է հանգչում Մուշեղի ընտանիքը»:

Մուշեղն ընկաւ անսիրտ հողաթմբի վրայ և դառնօրէն բացականչեց.

— Ագնի՛ւ, Ագնի՛ւ, վեր կաց, տե՛ս ո՞վ է քո առաջ ծնկաչոք աղերսում: Ես եմ քո դժբաղդութեան պատճառը, որովհետեւ ես չուղեցի խոնարհել այն մարդկանց առաջ, որոնք ուղեցին խել իմ սեփական իրաւունքները, և ահա այդ պատճառով էլ նրանք բաժանեցին մեզ միմեանցից:

Մուշեղն ոյժերը հաւաքելով աշխատում էր բարձրանալ, բայց նրա ոտները թուլացել էին, կարկամել: Նա իր սառն հայեացքը բևեռելով իր սիրելու պաղ շիրմին՝ արցունքների տեղատարափի մէջ արտասանեց.

Բացւած վարդը թառամեց,

Երգիչ սոխակն էլ լոնց,

Իր սիրալիր ձայնը կտրեց,

Եւ յաւիտեան նա լոնց:

Մուշեղն այս խօսքերը վերջացնելով սկսեց դողալ աշնանային դեղնած տերևի նման, ցնցւեց, մի ճիչ արձակեց և... ընկաւ գերեզմանի վրայ...

Արևի ճառագայթները ընկնելով Սամելի վրայ, չթողին, որ նա երկար շարունակի քունը. նա տեսաւ որ ընկերը չկար. վեր կացաւ ու իսկոյն մտաւ գերեզմանատուն:


Սամէլը երկար պտպտեց ու յետոյ, գտաւ միայն Մուշեղի անշունչ պիակը՝ դժբաղդ կնոջ գերեզմանի առաջ...



ՀՀ Ազգային գրադարան



NL0399291



— Գումարով գնողներին 20 % զեղչ. —

Վաճառում են «Գուտատներեղ» և «Գիր»  
 զրաժաճառանոցներում:  
 Հեղինակից կարելի է ստանալ նաև «Փնջիկ»  
 բանաստեղծություններ, գինն է 5 կոպ. Գինիչ հե-  
 տեհալ հասցեով՝ Тифлисъ, І й Успенскій тун. № 10.  
 ОГАНЕСУ АСРАНОВУ.